



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

3 մայիսի 2019 թվականի թիվ 45-Ա
ք. Երևան

«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ
ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի ապրիլի 22-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Բավարարել «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Օրուժիե» «Էյչ Դի Լայֆ»	31.12.2019թ.
«Մատչ! Պրեմիեր» «Կինոխիտ» «Կինոսվիդանիե» «Կինոսեմյա» «Մուժսկոյե Կինո» «Կինոմիկս»	31.12.2019թ.
«Մ1 Գլոբալ» «Բոկս ՏՎ» «Ինդիյսկոյե Կինո» «Կուխնյա ՏՎ» «Ավտո Պլյուս» «Զի ՏՎ» «ՏՏՏ Մյուզիք»	31.12.2019թ.
«National Geographic» «Nat Geo Wild» «Baby TV»	անժամկետ
«MTV Dance» «Nickelodeon» «Nickelodeon Jr»	անժամկետ
«Շանթ»	անժամկետ